ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀԱՄԱԶԱՍՊ ՔԱՀԱՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
(1864—1959)

Նոյեմբերի 24-ին, երեքշաբթի օրը, 95 տարեկան հասակում, Կիրովաբադում վախճանվեց արժանապատիվ Տ. Համազասպ քահանա Աբրահամյանը։

Հանգուցյալը ծնվել է 1864 թվականին այժմյան Մարտունու շրջանի (նախկինում Վերենդ) Ղըզ-ղալա գյուղում, քահանայի ընտանիքում։ Նրա հայրը՝ Տ. Գաբրիել ավագ քահանա Աբրահամյանը նույնպես եղել է հայտնի եկեղեցական։

Տ. Համազասպը իր նախնական կրթությունն ստացել է իր ծննդավայրի թեմական դպրոցում, Ղազարոս Աղայանի տեսչության օրոք։ 1918 թվականին Ամարասի պատմական վանքում քահանա է ձեռնադրվում Անանիա արքեպիսկոպոսի ձեռամբ և պաշտոնավարում է իր հայրենի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում մինչև 1934 թվականը։ Այնուհետև քահանայագործում է Կիրովաբադ քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մինչև իր մահը։

Հանգուցյալը եղել է պարտաճանաչ, նվիրված, իր ժողովրդից սիրված քահանա։ 1956 թվականին, Ադրբեջանի թեմի հայոց առաջնորդ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի միջնորդությամբ, Վեհափառ Հայրապետից պարգևատրվել է քահանայական լանջախաչով, իր բարվոք և նվիրված ծառայության համար։

Հանգուցյալի հուղարկավորությունը և թաղումը տեղի է ունեցել Կիրովաբադում, նախագահությամբ Բաքվի եկեղեցու ավագերեց արժանապատիվ Տ. Վահան Գրիգորյանի, որն իր դամբանականում անդրադարձել է հանգուցյալի մատուցած հոգևոր ծառայության վրա։

Հանգի՜ստ հանգուցյալի ոսկորներին և խաղաղությո՜ւն նրա հոգուն։